ՆԵՐԳԱՂԹԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Վերջերս Հարավային Ռուսաստանի հայոց թեմի «Արմատ» դպրոցում մեկնարկեց հայոց լեզվի և մշակույթի ուսուցիչների 2-րդ խորհրդաժողովը, որին մասնակցում էր 25 կրթական կազմակերպություններ ներկայացնող 45 ուսուցիչ: Ռոստովի մարզի պատվիրակներն էին Սոնա Կարապետյանը, Լուսինե Պետանյանը, Ռուզաննա Կարապետյանը և Արմինե Ղազարյանը:

Ստորև ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ՍՈՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ելույթը խորհրդաժողովում:

– Հարգելի՛ տիկնայք և պարոնայք, արժանապատի՛վ հայրեր, գործընկերներ, թույլ տվեք բոլորիս շնորհավորել այս հոգևոր-մշակութային, ուսումնաճանաչողական, հայապահպան-ռազմավարական, մի խոսքով՝ սպասված ու գեղեցիկ տոնի առթիվ, որը մեզ նվիրեցին «Վարդանյան» կրթական կենտրոնի մեր շատ հարգելի գործընկերները:

Հիացած ենք ձեր կոլեկտիվի միասնական ու բարձր մշակույթ որդեգրած՝ յուրաքանչյուր անդամով՝ փոքրից՝ մեծ: Մեկ անգամ ևս երախտագիտություն եմ հայտնում՝ հրավերի, ընդունելության, օգտակար քննարկումների, փորձի և մտքերի փոխանակման համար: Ուզում եմ ներկայանալ և ձեր թույլտվությամբ ամփոփել իմ տպավորությունները այս հանդիպումից:

Աշխատում եմ Ռոստով քաղաքի թիվ 83 հանրակրթական դպրոցում լրացուցից կրթության մանկավարժ (առաջին մասնագիտությամբ լրագրող եմ): Ես էլ ամեն օր բախվում եմ նույն խնդիրներին, որոնք նշեցիք դուք. միասնական ծրագիր ու դասագիրք ունենալու, երեխաների հաճախելիությունն ապահովելու, ծնողների հետ արդյունավետ համագործակցելու և այլ հարցեր:

Խոր հարգանք տածելով «Զանգակ» դասագրքի հեղինակ Զուլիետա Գյուլամիրյանի հանդեպ՝ իմ համեստ կարծիքով այդ ծրագիրը քիչ գործածական է ռուսախոս երեխաների համար: Կըրտսեր խմբում պարապում եմ «Սասունցի Դավիթ»-ով, ավագում՝ «Մեծ Մհեր»-ով: Շնորհակալություն դասագրքի հեղինակներին՝ Երազիկ Հարությունյանին, Կարինե Կատանյանին և ստեղծագործական խմբին:

Ուզում եմ նաև շնորհակալություն հայտնել այն բոլոր զեկուցողներին ու ելույթ ունեցողներին, ովքեր իրենց աշխատանքային փորձով ու մեթոդներով կիսվեցին մեզ հետ և շատ համառոտ անդրադառնալ նրանցից մի քանիսի խոսքին, քանզի դա ավելին էր, քան փորձի փոխանակումը՝ այն հոգու ու սրտի մասին էր, գեղեցիկի ու համամարդկայինի:

Խոստովանում եմ, որ օրվա վերջում ինձ բռնեցի շատ հուզված և լավ էր, որ «Արշալույս» ֆիլմը եկավ արդարացնելու արցունքներս: Այս մասին հետո:

Այժմ ելույթների մասին:

Հարգելի՛ Երազիկ Հարությունյան, գլուխ եմ խոնարհում ձեր առջև հայրենասիրության և մայրենիի պահպանման ֆանտաստիկ ջանքերի ու աշխատանքի համար: Այդ պտուղները մենք այսօր վայելում ենք: Շնորհակալություն: Առարկաների ու մեթոդների բազմազանության, ազգային, մշակութային ինքնության հարցերը միշտ էլ հուզել են կրթության նախարարության մեր հարգարժան Թամարա Զալինյանին, փորձագետ Թամարա Թովմասյանին և իրենց ծրագրերի իրականացման մղումով նրանք միշտ այնտեղ են,

Կրասնոդարի «Վարդանյան» կենտրոնը:

որտեղ սահմանապահի կարիք կա, այնտեղ, ուր ամենաշատն է վտանգված մայրենիի ինքնությունը: Շնորհակալություն ձեզ, տիկին Զալինյան, տիկին Թովմասյան, որ միշտ մեր կողքին եք՝ սահմանում:

Պարզվում է, որ իր հայրենասիրությամբ ապրիլյան հերոսներին չի զիջում նաև Ռոստովից իմ գործընկեր Լուսինե Պետանյանը: Որպես հայրենասիրության կենդանի դաս՝ նա հյուր է հրավիրել քառօրյա մասնակից – հերոս սահմանապահներին: Շնորհակալություն լավ ավանդույթի համար:

Առանձնակի երախտագիտություն եմ ուզում հայտնել Պյատիգորսկի հանրակրթական դպրոցի տնօրեն Զուլիետա Միխաիլովնային՝ հայոց լեզուն որպես դասացուցակային առարկա՝ ուսումնական ծրագրում ընդգրկելու համար, ինչպես նաև Անապայից Կարինե Փիլոյանին՝ կրթօջախի հիմնման, նոր մեթոդների ու առաջարկների համար: Շնորհակալություն:

Խորին հարգանք՝ ու ակնածանք Գոհար Մխիթարյանին՝ երեխաների տարբեր տարիքայի խմբերում քրիստոնեական դաստիարակության իր փորձը մեզ ներկայացնելու համար: Այո , թողնենք, որ երեխաներնն առաջինը մոտենան Լույսին, քանի որ նրանցն է երկնքի արքայությունը: Եվ կարևոր չէ անգամ, թե որ երկրում է ապրում երեխան, կարևոր է, որ նա իմանա ու ձգտի պահել Աստծո պատվիրանները և ճանաչի երեք անփոփոխ արժեք՝ Հայրենիք, Հավատ, Լեզու:

Եվ վերջում Մելսիդա Հովհաննիսյանի ինձ շատ հարազատ կոչի պես հընչած համոզմունքը – Մարդը որպես գերակա արժեք: Նայեք երեխային այդ տեսանկյունից: Դաստիարակենք նախ և առաջ մարդ, ապա նոր՝ մասնագետ: Շնորհակալ եմ նաև բոլոր նրանց, ում ելույթներին չկարողացա անդրադառնալ: Նրանք նույնպես շատ կարևոր ու օգտակար էին:

Սիրելի՛ գործընկերներ, որպես վերջաբան՝ ուզում եմ ասել, թե ինչո՞ւ երեկ օրվա վերջում հազիվ էի զսպում արցունքներս: Այս տանիքի տակ հավաքված իմ գեղեցիկ, խելացի հայուհիների համար. վստահ եմ, որ մեզանից յուրաքանչյուրի բացակայությամբ աղքատացել է հայրենիքը, հարստացել է օտարի մշակույթը: Գիտեմ, որ դըժվար է ապրել օտարության մեջ՝ հոսանքին հակառակ, 18 տարի ապրում եմ այսպես՝ ներկա ու բացակա:

Սիրելի՛ ուսուցիչներ, դուք անում եք գրեթե անհնարինը՝ փրկելու, պահելու այն մի բուռ սերմացու արյունը, ոը մեզ հետ բերել ենք: Կփրկվի՞ այդ սաղմը, ես վստահ չեմ, բայց վստահ եմ, որ հիմա դեպի հայրենիք ճամպրուկները կապելու ժամանակն է, հատկապես այն ծնողների գիտակցությունը պետք է արթնացնել, որոնք այս պահին չուզենն ո՛չ կեցություն, ո՛չ աշխատանք, ո՛չ փաստաթուղթ. ուղղակի հայտնվել են այստեղ, որովհետև բոլորը գալիս են, իրենք էլ՝ են եկել: Ես կարծում եմ, որ այսօր մեր՝ մտավորականներիս դերն ավելի պատասխանատու է դառնում. կողմնորոշել մարդկանց վերադառնալ հայրենիք, ինչպես դա անում են հրեաները: Լռելն այլևս անթույլատրելի է: Եթե կուզեք, ես էլ այս հայապահպան մեթոդն եմ առաջարկում. քարոզել՝ ներգաղթ:

Սիրելի՛ գործընկերներ, այսօր տըխրությամբ նկատեցի, որ շատերը չխոսեցին այն նոր Հայաստան-մանուկի մասին, որի երկար սպասված ծնունդին հետևեցինք ու ներկա եղանք: Կարծես դա ուրիշի ծնողի հետ է տեղի ունեցել: Ամբողջ աշխարհն՝ այսօր այդ մասին է խոսում, իսկ մենք՝ ակամա սփյուռքահայ ուսուցիչ դարձածներս, զգուշավոր լռում ենք: Ընդամենը 22 գարուն ապրած Միսաք Մեծարենցը գրել է. «Տո՛ւր ինձ, Տե՛ր, ուրախություն անանձնական»: Ճիշտն ասած՝ այս օրերին խորությամբ հասկացա այդ խոսքերի իմաստը, երբ այլևս աշխարհի բարդ խաչմերուկներում գլուխներս բարձր ու հըպարտ քայլելու հնարավորություն ընձեռեց մեզ անկախության սերունդը, որը Հայաստանի հրապարակի բաց համալսարանում, ընդամենը մեկ ամսվա ընթացքում, երկրի հուսահատ բնակչից կերտեց Հայաստանի հպարտ քաղաքացուն: Աշխարհը հիացավ ու զարմացավ մեր ժողովրդի, հատկապես երիտասարդության արիական կեցվածքով ու վարքով: Կոչ եմ անում տեր կանգնել ծնված մանուկին:

Հպարտ եմ, որ ես այդ ժողովրդի զավակն եմ, և այսօր ունեմ հայոց լեզվի ուսուցչի սուրբ առաքելությունը: Հպարտ եմ, որ իմ շատ սիրելի հայորդիների ուժերով ստեղծվել է «Վարդանյան» կրթահամալիրը՝ ի նպաստ և ի փառս Հայաստան հարենիքի ու պետության: Հպարտ եմ, սիրելինե՛ր, որ ձեզնից մեկը լինելու պատիվն ունեմ: Շնորհակալություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱՄԵՆ ՏԱՐԻ 200 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ Է ՄԵԿՆՈՒՄ ՌԴ՝ ԱՇԽԱՏԵԼՈՒ

«Միգրացիան պետք է ներկայացվի որպես հասարակության հաջող զարգացման գործոն՝ աշխարհում սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական իրավիճակի վրա միգրացիոն գործընթացների ազդեցության համատեքստում», – կարծում է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թաթուլ Մանասերյանը: Մասնավորապես, միգրացիայի խնդիրները ԵԱՏՄ անդամ պետությունների ինտեգրացիոն գործընթացների շրջանակներում անհրաժեշտ է դիտարկել եղբայրության և բարիդրացիության ոգով: Այս մասին տնտեսագետի կարծիքը ներկայացվեց «Ինտեգրացիա և զարգացում» հասարակական կազմակերպության և Եվրասիական փորձագիտական ակումբի կազմակերպած «Հայաստան-Ռուսաստան ռազմավարական դաշինք. իրողություններ և արդի մարտահրավերներ» համաժողով-«ուղեղային գրոհի»-ի ժամանակ: Թաթուլ Մանասերյանը նշում է, որ Ռուսաստանը միշտ եղել է առաջատարը այն երկրների ցանկում, որտեղից ստացվում են Հայաստան եկող մասնավոր դրամական փոխանցումները: Ամեն տարի շուրջ 200 հազար հայ աշխատանքային միգրանտներ Ռուսաստան են մեկնում սեզոնային արտագնա աշխատանքի համար: Նրանք, ինչպես նաև Ռուսաստանում բնակվող և աշխատող հայկական սփյուռքի մոտ երկու միլիոն ներկայացուցիչներ, փող են ուղարկում Հայաստան, ինչը շատ կարևոր ներդրում կարելի է համարել երկրի տնտեսության մեջ ապահովելով բնակչության համար մոտ 20%-ի հասնող կայուն եկամուտներ: ԵԱՏՄ-ի շրջանակներում, ըստ նրա, կարգավորվել է ՌԴ-ի և ՀՀ-ի միգրացիոն հոսքերի օրենսդրական և իրավական բազան: Մասնավորապես, «Ռուսաստանի Դաշնության մուտքի և ելքի» մասին ՌԴ օրենքը, «Ռուսաստանի Դաշնությունում օտարերկրյա քաղաքացիների կարգավիճակի մասին» ՌԴ օրենքը և այլ իրավական ակտերը թույլ են տվել դեռևս 2014 թ. հունվարից արտերկրի քաղաքացիներին մուտք գործելու Ռուսաստանի Դաշնության վիզային տարածք (այդ թվում՝ Հայաստանից) և մնալու Ռուսաստանի տարածքում յուրաքանչյուր 180 օրվա ընթացքում 90 օր: «Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունն ավելի հեշտացրեց հայ աշխատանքային միգրանտների գործը՝ դիմելու Ռուսաստան մուտք գործելու արգելքի վերացման համար: Այսօր Հայաստանի քաղաքացիների համար ավելի հեշտ է դիմել Ռուսաստանին մուտքի արգելքը վերացնելու հարցով, քան ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրների քաղաքացիների համար: Եթե այդ երկրներ քաղաքացիներն անցնում են բարդ և երկարատև ընթացակարգեր, ապա ՀՀ-ի դեպքում Ռուսաստանը համաձայնել է ընդունել Հայաստանի միգրացիոն ծառայության ներկայացրած դիմումները և ստուգել մարդկանց անձնական գործերը», - փաստում է տնտեսագետը: Ըստ նրա, որպես աշխատանքային միգրացիայի պարզեցմանը վերաբերող ընթացակարգերի հետևանք, Հայաստան եկող դրամական փոխանցումների ծավալները վերջին տարիներին աճի որոշակի միտում են արձանագրում, ինչը հիմք է տալիս եզրահանգելու, որ տեսանելի ապագայում ռուսական աշխատանքային շուկան կլինի առավել գրավիչ հայ միգրանտների համար: Ըստ Թաթուլ Մանասերյանի՝ 2018-ի առաջին եռամսյակում մասնավոր դրամական փոխանցումների ոլորտում առկա էին հակասական միտումներ: Սկզբում՝ հունվարին մասնավոր տրանսֆերտները կազմել են 94 մլն 672 հազար դոլար: Դեկտեմբեր ամսվա համեմատ դա $ 100 մլն-ով ավելի քիչ է: Փոխանցումների մեծ մասը՝51.7 միլիոն դոլար, ստացվել է Ռուսաստանից, իսկ 12.3 միլիոն դոլար՝ ԱՄՆ-ից: ՌԴ-ից Հայաստան կատարված դրամական փոխանցումն էլ 2017 թ. փետրվարին, 2016 թ.-ի փետրվարի համեմատ աճել են 26.5% -ով ՝կազմելով 57.2 մլն դոլար: Սրանք ՀՀ կենտրոնական բանկի տվյալներն են: Ըստ որում, մեկ ամսվա կտրվածքով ռուսական դրամական փոխանցումները դեպի հանրապետություն աճել են 31.4%: Միևնույն ժամանակ, դրամական փոխանցումները ԱՄՆ-ից, փետրվարին 2017 թ. նախորդ տարվա նույն

ժամանակահատվածի համեմատ նվազել է 11.6%-ով, կազմելով $ 12 մլն. (մեկ ամսում դրանք աճել են 12.4% ով):